ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2023 թվականի թիվ 30-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2023 թվականի ապրիլի 03-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 7 վարչական վարույթի նյութերը՝ ***պարզեց.***

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է լսողական մեդիածառայություն մատուցող «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Ռադիո Վան» լսողական ծրագրի եթերում «Գովազդի մասին» օրենքով ամրագրված գովազդի հեռարձակման սահմանափակումների խախտման փաստ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2023 թվականի ապրիլի 03-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2023 թվականի ապրիլի 03-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ կազմված արձանագրության՝ Հեռարձակողի կողմից հեռարձակվող «Ռադիո Վան» լսողական ծրագրի 2023 թվականի մարտի 31-ի ձայնագրության մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ ժամը՝ 08:39:15-08:39:46-ին, 10:00:45-10:01:09-ին, 11:49:00-11:49:30-ին, 13:21:36-13:22:05-ին, 17:09:00-17:09:28-ին, 18:51:54-18:52:17-ին և 19:39:18-19:39:46-ին հեռարձակված «Վագա Ֆարմ» դեղատնային ցանցի գովազդում չի նշվել կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը:

Հանձնաժողովը 2023 թվականի ապրիլի 04-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողի ներկայացուցիչների կողմից 2023 թվականի ապրիլի 11-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացրած իրենց պարզաբանմամբ հայտնել են հետևյալը.

«Ծանոթանալով գովազդի ձայնագրությանը՝ ակնհայտորեն պարզ է դառնում, որ Հանձնաժողովի արձանագրած այն հանգամանքը, որ գովազդվել է դեղատնային ցանց, չի համապատասխանում իրականությանը: Խնդրո առարկա ձայնագրությունում գովազդվում է գլխամաշկի խնամքի իտալական միջոց՝ «Մեդպլանտա» անվանումով, որը պայքարում է գլխամաշկի թեփի դեմ: Միայն գովազդի վերջում նշվում է, որ վերոնշյալ խնամքի միջոցը կարող է ձեռք բերվել «Վագա Ֆարմ» դեղատների ցանցից: Չնայած որ այս դեպքում «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊ ընկերությունը որևէ պարտավորություն չուներ նշելու «Վագա Ֆարմ» դեղատների ցանցի լիցենզիայի համարը և ամսաթիվը, սակայն, այնուամենայնիվ խուսափելու համար ՍՊ ընկերության կողմից արագացված տեմպով ավելորդ խնդիրներից (եթերաժամանակն ավելորդ չծանրաբեռնելու նպատակով) նշել են դրանք: Ավելին, հարկ եմ համարում արձանագրել, որ լիցենզիայի համարը և ամսաթիվն արագացված կարգով նշվել են ընդամենը մի քանի օր, իսկ 2023թ. ապրիլի 01-ից ՍՊ ընկերությունը նույնիսկ արագացված տեմպն է վերացրել և գովազդի վերջամասը տեղադրել ավելի դանդաղ տեմպով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին հետի համաձայն՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը»:

Հեռարձակողի ներկայացուցիչներն իրենց պարզաբանման վերջում խնդրել են կարճել Հեռարձակողի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է Օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետը սահմանում է.

22) **տեսալսողական գովազդ՝** իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումը Հեռարձակողի միջոցով, որը շահույթ ստանալու նպատակով կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ապրանքների, ծառայությունների, գաղափարների կամ նախաձեռնությունների նկատմամբ.»:

«Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասը սահմանում է.

«Բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն, դեղերի արտադրություն, բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գովազդման ժամանակ գովազդում պարտադիր պետք է նշվեն կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը:»:

«Գովազդի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիայի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դրույթների պահանջները, Հանձնաժողովն ամրագրում է, որ տեսալսողական մեդիածառայություն մատուցողները գովազդ հեռարձակելիս պարտավոր են պահպանել Օրենքով և «Գովազդի մասին» օրենքով գովազդի առանձնահատկությունները սահմանող այն դրույթները, որոնք սահմանում են գովազդի հեռարձակման որոշակի պահանջներ ու սահմանափակումներ, և այս վարույթի շրջանակներում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասի պահանջները՝ հեռարձակել «Վագա Ֆարմ» դեղատնային ցանցի գովազդը՝ նշել կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը:

Փաստենք, որ Հեռարձակողը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում լսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում լսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով՝ սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասով սահմանված դրույթների պահանջները:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումներն ու փաստարկները: Ըստ Հեռարձակողի, մասնավորապես «Ռադիո Վան» տեսալսողական ծրագրի կողմից հեռարձակված գովազդը «Մեդալանտա» անվանումով իտալական գլխամաշկի խնամքի միջոցի գովազդն է եղել, այլ ոչ թե Հանձնաժողովի կողմից արձանագրած այն հանգամանքը, որ գովազդվել է «Վագա Ֆարմ» դեղատնային ցանցը:

«Գովազդի մասին» օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է «գովազդ» հասկացությունը, համաձայն որի՝ **գովազդ՝** տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն անորոշ թվով անձանց շրջանում, որը կոչված է ձևավորելու կամ **պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:**

«Գովազդի մասին» օրենքի իմաստով «գովազդի» հասկացությունն ուսումնասիրելով՝ հասկանում ենք, որ տեղեկությունը գովազդ համարելու համար անհրաժեշտ է տեղեկության հետևյալ հատկանիշների միաժամանակյա առկայություն.

- տեղեկությունը պետք է հնարավորություն տա անհատականացնել կոնկրետ իրավաբանական կամ ֆիզիկական անձին, ապրանքը, գաղափարը կամ նախաձեռնությունը, այսինքն՝ պետք է առկա լինի գովազդի օբյեկտը,
- տեղեկությունը պետք է տարածվի տեղեկատվական առնվազն մեկ միջոցով,
- տեղեկությունը պետք է նախատեսված լինի անորոշ անձանց շրջանում տարածելու համար,
- տեղեկությունը պետք է նպատակ հետապնդի ձևավորել և պահպանել գովազդվող օբյեկտի նկատմամբ հետաքրքրությունը:

Այսպես, նախ և առաջ՝ գովազդն իր բովանդակությամբ տեղեկություն է, որը կարող է արտահայտվել բանավոր խոսքի, գրաֆիկական, ֆոտո, աուդիո և տեսապատկերների, երաժշտության, գույնի և այլ միջոցներով, ինչպես առանձին, այնպես էլ նշված միջոցների համակցությամբ: Որպես տեղեկություն՝ այն կարող է տարածվել տարբեր տեղեկատվական միջոցների օգնությամբ, այսինքն՝ պետք է հրապարակվի և հասանելի դառնա սպառողին: Հետևաբար, տեղեկությունն առանց տարածելու, չի կարող համարվել գովազդ:

Գովազդը պետք է գովազդվող օբյեկտի նկատմամբ ձևավորի կամ պահպանի հետաքրքրությունը:

Ըստ Հեռարձակողի՝ ստացվում է, որ «Ռադիո Վան» տեսալսողական ծրագրի կողմից հեռարձակված մի ամբողջական նյութ ներկայացնող գովազդը կարելի է տարանջատել երկու մասի, ընդ որում մի մասի՝ «Մեդպլանտա» անվանումով իտալական գլխամաշկի խնամքի միջոցի մասին տեղեկությունը գովազդ է, այսինքն գովազդվող օբյեկտի նկատմամբ ձևավորում կամ պահպանում է հետաքրքրությունը, իսկ նույն գովազդում հնչող տեղեկության մյուս մասը՝ «Վագա Ֆարմ» դեղատնային ցանցի մասին՝ գովազդ չէ:

Հարկ ենք համարում նշել, որ «Տեսալսողական մեդիայի մասին» և «Գովազդի մասին» օրենքները հստակ տալիս են ***գովազդի*** մասին սահմանումները, ինչպես նաև «Գովազդի մասին» օրենքով նշվում են **ապրանքների առանձին տեսակների գովազդի առանձնահատկությունները**:

Այսպիսով, 2023 թվականի մարտի 31-ի ձայնագրության ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ Հեռարձակողի կողմից հեռարձակվել է դեղատնային գործունեություն իրականացնող «Վագա Ֆարմ» դեղատների ցանցի վերաբերյալ գովազդ, որի վերջում ընդհանրապես լսելի, հասկանալի չէ, ոչ կազմակերպության գործունեության լիցենզիայի համարը և ոչ էլ տրամադրման ամսաթիվը, այլ փոխարենը հնչում է անհասկանալի ձայնային ազդանշան, հետևաբար, այս հարցի վերաբերյալ Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումը հիմնավոր և բավարար չէ «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասի դրույթներով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և պատասխանատվությունը չկիրառելու համար:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողը «Վագա Ֆարմ» դեղատների ցանցի մասին գովազդը հեռարձակելիս, չի նշել կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը՝ խախտելով «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասի պահանջները:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի հատկանիշներին:

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ սույն օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.
3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով, 14-րդ հոդվածի 7-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետով, 42-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ պարբերություններով, 15-րդ հոդվածի 7^3-րդ մասով, 24-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊ ընկերության ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

26 ապրիլի 2023թ.
ք. Երևան